

**«Կոկա-Կոլա Յեւրեանիկ Բորժինգ Քամփնի Արմենիա»
ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներին համապատասխան`
Ֆինանսական հաշվետվություններ և անկախ
աուդիտորական եզրակացություն**

31 դեկտեմբերի, 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	Ընդհանուր տեղեկություններ «Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ-ի և նրա գործունեության մասին	5
2	Ընկերության գործառնական միջավայրը	5
3	Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ	6
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ	13
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին	14
6	Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	14
7	Հիմնական միջոցներ	16
8	Ոչ կուլթական ակտիվներ	17
9	Հիմնական միջոցների գծով կանխավճարներ	17
10	Տրամադրված վարկեր	18
11	Պաշարներ	18
12	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18
13	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20
14	Կանոնադրական կապիտալ	20
15	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	21
16	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21
17	Ավանդային պարտավորություններ	22
18	Հատկությունների վերլուծություն ըստ կատեգորիաների	22
19	Գործառնական եկամուտներ և ծախսեր	23
20	Շահութահարկ	24
21	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	25
22	Ֆինանսական ռիսկերի կառավարում	25
23	Կապիտալի կառավարում	29
24	Իրական արժեքի բացահայտումներ	30
25	Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների	30
26	Փոխկապակցված կողմերի գծով մնացորդներ և գործարքներ	31
27	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	32



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կոկա-Կոլա Չեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ բաժնետիրոջը:

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Կոկա-Կոլա Չեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2020թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Ընկերության՝ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ-ներ»):

Աուդիտի առարկան

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններ՝ առ 2020թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունը և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր Եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻս Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԻս Վարքագրին համապատասխան:

«ՓրայսուոթերհաուսԿոլպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
հեռ.՝ (+37410) 512151, ֆաքս՝ (+37410) 521000, www.pwc.com/am



Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին՝ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ



թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելու, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությանը դադարեցնի անընդհատության հիմունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների վասին:



 Ալեքսեյ Ռուսանով

 Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

14 Յուլիսի 2021

Երևան, Հայաստանի Հանրապետություն

**«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Զամբինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Շնթ.Ձ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	5,585,156	5,627,691
Ոչ կյուբական ակտիվներ	8	197,685	275,179
Հիմնական միջոցների գծով կանխավճարներ	9	23,895	307,744
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		117,970	165,000
Տրամադրված վարկեր	10	3,358,578	4,972,891
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		9,283,284	11,348,505
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	1,758,740	1,695,994
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	391,971	372,369
Տրամադրված վարկեր	10	2,054,263	705,916
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	1,672,881	817,420
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		5,877,855	3,591,699
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		15,161,139	14,940,204
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	1,009,875	1,009,875
Զբաղիչված շահույթ		9,996,842	8,055,039
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		11,006,717	9,064,914
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ վարձակալության գծով	15	172,410	162,500
Հետաձգված հարկային պարտավորություն	20	195,917	21,785
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		368,327	184,285
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		-	91,570
Ընթացիկ պարտավորություններ վարձակալության գծով	15	86,529	100,503
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	3,094,121	4,887,870
Շահութահարկի գծով կրեդիտորական պարտք		382,483	399,104
Ավանդային պարտավորություններ	17	222,962	211,958
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,786,095	5,691,005
Ընդամենը պարտավորություններ		4,154,422	5,875,290
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		15,161,139	14,940,204

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2021թ. հուլիսի 14-ին:

Արթուր Ասիակյան
Գլխավոր տնօրեն



Կարինե Յոյան
Գլխավոր հաշվապահ/հարկերի գծով
ղեկավար

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բորժինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<i>Ծնթգ.</i>	<i>2020թ.</i>	<i>2019թ.</i>
Հասույթ	18	20,416,005	22,189,991
Վաճառքի ինքնարժեք	19	(11,343,511)	(12,669,447)
Համախառն շահույթ		9,072,494	9,520,544
Այլ գործառնական եկամուտ	19	756,389	793,344
Իրացման ծախսեր	19	(2,620,089)	(2,667,880)
Ընդհանուր և վարչական ծախսեր	19	(997,088)	(1,271,063)
Գովազդի և մարկետինգի ծառայություններ	19	(1,009,893)	(1,784,781)
Այլ գործառնական ծախսեր	19	(941,907)	(1,025,853)
Գործառնական շահույթ		4,259,906	3,564,311
Ֆինանսական եկամուտ		157,066	171,468
Ֆինանսական ծախս		(21,364)	(27,637)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		4,395,608	3,708,142
Շահութահարկի գծով ծախս	20	(1,014,795)	(738,782)
Տարվա շահույթ		3,380,813	2,969,360
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՂՈՐԾԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԸ		3,380,813	2,969,360

5-32 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծնթյուն	Կանոնադրական կապիտալ	Գրաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 1 հունվարի 2019թ.	14	1,009,875	7,885,679	8,895,554
Տարվա շահույթ	-	-	2,969,360	2,969,360
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(2,800,000)	(2,800,000)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	14	1,009,875	8,055,039	9,064,914
Ընդամենը 2020թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	3,380,813	3,380,813
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(1,439,010)	(1,439,010)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	14	1,009,875	9,996,842	11,006,717

5-32 Էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ՝ Նախքան շահութահարկով հարկումը		4,395,608	3,708,142
Ճշգրտումներ՝			
Հիմնական միջոցների մաշվածություն	19	1,060,214	1,073,731
Այլ ոչ կյութական ակտիվների ամորտիզացիա	19	87,112	85,382
Հիմնական միջոցների դուրս գրում		105,338	(30,863)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում / (վերականգնում)		37,343	(16,433)
Ավանդային պարտավորությունների շարժ		11,004	80,387
Ֆինանսական եկամուտ		(157,066)	(171,468)
Ֆինանսական ծախս		21,364	27,637
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	19	(174,156)	43,972
Այլ անկանխիկ գործառնական ծախսեր		(13,628)	93,305
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալում փոփոխությունները		5,373,133	4,893,272
Պաշարների աճ		(62,746)	(36,142)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքի (սվազում)/աճ		(1,991,651)	729,723
Առևտրային և այլ դեբիտորական պարտքի աճ/(սվազում)		(9,915)	500,682
Շրջանառու կապիտալում փոփոխություններ		(2,064,312)	1,194,263
Վճարված շահութահարկ		(857,284)	(836,617)
Ստացված տոկոսային եկամուտ		157,066	113,748
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ		2,608,603	5,365,186
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(728,768)	(1,085,476)
Ոչ կյութական ակտիվների ձեռքբերում		(9,618)	(6,135)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		-	13,081
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(738,386)	(1,078,530)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Փոխառություններից ստացված միջոցներ		494,744	989,516
Փոխառությունների մարում		(586,314)	(987,313)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում		(135,828)	(134,525)
Կապակցված կողմին տրամադրված վարկեր		(3,148,680)	(4,829,558)
Կապակցված կողմին տրամադրված վարկերի մարում		3,791,459	3,905,960
Վճարված շահաբաժիններ		(1,439,010)	(2,800,000)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(1,023,629)	(3,855,921)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		8,873	(4,338)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		817,420	391,022
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին		1,672,881	817,420

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

**1 Ընդհանուր տեղեկություններ «Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ-ի
և նրա գործունեության մասին**

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, «Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ «Ընկերություն») համար:

Ընկերությունը գրանցվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետև՝ «ՀՀ»): Ընկերությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է՝ սահմանափակված իր բաժնետոմսերով, և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունը CC Beverages Holdings II B.V. (2019:Leman Beverages S.A.R.L.)-ն էր՝ հիմնված, գործող և կազմակերպված Նիդերլանդների օրենսդրության համաձայն: Միաձուլումը տեղի է ունեցել 2020թ. հոկտեմբերի 30-ին, CC Beverages Holdings II B.V. և Leman Beverages Holding S.A.R.L.-ի միջև, իսկ գրանցումը ՀՀ կազմակերպությունների պետական ռեգիստրում տեղի է ունեցել 2021 թվականին: Ընկերության վերջնական վերահսկողությունն իրականացվում է Coca-Cola Hellenic Bottling Company S.A.- ի կողմից, որը հիմնվել է Շվեյցարիայում (2013 թվականից):

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական բիզնես գործունեությունը ոչ ավերիկային և ավերիկային խմիչքների ներմուծումը, իրացումը և արտադրությունն է ՀՀ տարածքում: Ընկերության արտադրական օբյեկտները գտնվում են Երևանում, ՀՀ:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Թբիլիսյան խճուղի 8/3, Երևան, 0052, ՀՀ:

Ներկայացման արժույթը. Սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետև՝ «ՀՀ դրամ»), եթե այլ կերպ նշված չէ:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ենթակա լինել տարաբնույթ մեկնաբանումների (Ծանոթագրություն 21): Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար, տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

COVID-19. 2020թ. մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցությանը զսպման ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Այս միջոցառումները, ի թիվս այլոց, խիստ սահմանափակել են Հայաստանում տնտեսական գործունեությունը, բացասաբար են ազդել, և դեռևս անորոշ ժամանակով կարող են շարունակել բացասական ազդեցություն ունենալ գործարարության, շուկայի մասնակիցների, Ընկերության պատվիրատուների, ինչպես նաև Հայաստանի և համաշխարհային տնտեսության վրա:

Դեկավարությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու և իր հաճախորդներին և աշխատակիցներին աջակցելու ուղղությամբ.

1. Կատարվում է աշխատակիցների, կապալառուների և բոլոր հյուրերի ջերմաչափում անվտանգության դարպասների մոտ և մինչև գործարանից հեռանալը (օրական երկու անգամ)
2. Աշխատակիցները, որոնք ունեն ջերմություն և թույլ ինքնազգացողություն, ուղարկվում են տուն/հիվանդանոց և նրանց թույլատրվում է վերադառնալ աշխատավայր միայն բացասական ԴՇՌ թեստի արդյունքի առկայության դեպքում:
3. 1.5-2 մ սոցիալական հեռավորության պահպանում բոլոր ստորաբաժանումներում (հատակները և սեղանները նշագրված են)
4. Տարածքի ախտահանումը կատարվում է օրական երկու անգամ (գրառումները պահվում են անվտանգության վարչությունում)
5. Յուրաքանչյուր ստորաբաժանումում առկա են տեղեկատվական պաստառներ, որոնք աշխատողներին հիշեցնում են համավարակի ընթացքում անհրաժեշտ միջոցառումների մասին:

2 Ընկերության գործառնական միջավայրը (շարունակություն)

Համայնքի և հաճախորդների համար ձեռնարկվել են հետևյալ աջակցության ծրագրերը.

- Կոկա-Կոլա ԲԹԱ-ն տեղական համայնքների հիվանդանոցների համար ձեռք է բերել շարժական բժշկական սարքավորումներ:
- Ընկերությունը նաև հիվանդանոցներին անվճար մատակարարել է իր սեփական արտադրության ջուրը: Նվիրաբերվել է 82655 շիշ
- Աջակցել է հաճախորդներին անվճար ըմպելիքներով և մարկետինգային սարքավորումներով՝ մոտավորապես 15.1 մլն դրամի արժողությամբ

Լեռնային Ղարաբաղի պատերազմը և դրա հետևանքները: Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտությունը սկսվեց 2020թ. սեպտեմբերին և շարունակվեց մինչև 2020թ. նոյեմբեր, երբ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների կողմից ստորագրվեց համատեղ հայտարարություն: Հայտարարության համաձայն, Լեռնային Ղարաբաղի շրջաններից մի շարք տարածքներ փոխանցվեցին Ադրբեջանին, և ակնկալվում է տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակում: Տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման վերաբերյալ որոշումները ներկայումս մշակվում են փորձագիտական խմբերի կողմից: Այս բոլոր իրադարձություններն ու գործողությունները էապես ազդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Ընկերության գործունեության վրա պատերազմը ազդել է հետևյալ կերպ.

- Տարածաշրջանում ծավալների գծով կորուստ (մոտ 567,5 մլն դրամ համախառն վաճառքից հասույթ)
- Տարածաշրջանում մարքեթինգային սարքավորումների գծով կորուստ (պահուստի գումարը 94.8 մլն դրամ էր)
- Բաշխողի պարտքի վարկային ռիսկ չկա, քանի որ առկա է 75 մլն դրամի բանկային երաշխիք

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկած միջոցառումները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստներ. Ընկերության վարկերի, դեբիտորական պարտքերի և համանման ակտիվների ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով Ընկերությունն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 22-ը ներառում է ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Ընկերությունը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող վարկային կորուստների չափման մոդելներում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Բացառությամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ից, այս սկզբունքները հետևողականորեն կիրառվել են բոլոր հաշվետու ժամանակաշրջանների համար, եթե այլ կերպ նշված չէ: (Տե՛ս Ծանոթագրություն 5):

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով հսկի ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ձևաչափում է շահույթում կամ վնասում, որպես այլ գործառնական եկամուտ կամ ծախս: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հողվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հողվածները, ներառյալ սեփական կապիտալի ներդրումները, փոխարկվում են իրական արժեքի որոշման ամաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հողվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ (2019թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 479.7 ՀՀ դրամ), 1 Եվրո = 641.11 ՀՀ դրամ (2019թ.՝ 1 Եվրո = 537.26 ՀՀ դրամ), 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 709.47 ՀՀ դրամ (2019թ.՝ 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 629.13 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլի = 7.02 ՀՀ դրամ (2019թ.՝ 1 ռուսական ռուբլի = 7.77 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցները ներառում են կառուցվող ակտիվները, որոնք հետագայում ակնկալվում է օգտագործել որպես հիմնական միջոց: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք գոյություն ունի հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած օտարման համար անհրաժեշտ ծախսումները: Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հատույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ գործառնական եկամուտների/ծախսերի հոդվածում:

Մաշվածություն. Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Օգտակար ծառայություն՝ արտահայտված տարիներով

Շենքեր, մեքենա-սարքավորումներ	4-40
Փոխադրամիջոցներ	5-8
Մարկետինգային սարքավորումներ	2-15
Այլ	2-12

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լինել դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ոչ նյութական ակտիվներ. Ընկերության ոչ նյութական ակտիվներն ունեն սահմանափակ օգտակար ծառայություն և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրակազմ: Կապիտալիզացված ծախսերը ներառում են աշխատակիցների վճարումների գծով ծախսերը՝ ծրագրակազմի մշակման անձնակազմին կատարված վճարումների գծով, և վերադիր ծախսերը՝ համապատասխան մասով: Համակարգչային ծրագրակազմի հետ կապված բոլոր մյուս ծախսերը, օրինակ. սպասարկման, ծախսագրվում են այն ժամանակ, երբ դրանք առաջանում են:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվարկվում է գծային մեթոդով՝ այդ ակտիվների գնահատված օգտակար ծառայության ընթացքում:

Օգտակար ծառայություն՝ արտահայտված տարիներով

Ներքին մշակված ծրագրակազմ	10
Ձեռք բերված ծրագրակազմի լիցենզիաներ	4

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ
(շարունակություն)**

Արժեզրկման դեպքում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ մեծություններից նվազագույնը՝ օգտագործման արժեք կամ իրական արժեք՝ հանած օտարման ծախսերը:

Ֆինանսական գործիքների դասեր: Ընկերությունը դասակարգում է ֆինանսական գործիքներն ըստ դասերի, որոնք արտացոլում են տեղեկատվության բնույթը և հաշվի են առնում այդ ֆինանսական գործիքների բնութագրերը: Կատարված դասակարգումը կարելի է տեսնել ստորև բերված աղյուսակում:

Դասակարգում ըստ ՀՀՄՍ 39		Ընկերության կողմից սահմանված դասեր
Ֆինանսական ակտիվներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Թողարկած վարկեր
		Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
Ֆինանսական պարտավորություններ	Ամորտիզացված արժեքով հաշվառված ֆինանսական պարտավորություններ	Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
		Փոխառություններ
		Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Կախված դասակարգումից՝ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով կամ ամորտիզացված արժեքով, ինչպես նկարագրված է ստորև:

Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայությունն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Լշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի տվորական օրական առջուկվածաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Ձևահատման մեթոդները, ինչպիսիք են գեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են՝ որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չուներ: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատուների հավելավճարները և գեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեզրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող վարկային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեզրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ գեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեզրված տոկոսային եկամուտը և հաշվեզրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեզրված արժեկտրոնը և ամորտիզացված գեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք)։ Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա վարկային կորուստները) զեղչում է ճշգրիտ միջև ֆինանսական գործիքի գուտ հաշվեկշռային արժեքը։ Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը միջև հաջորդ տոկոսադրույքի վերագնահանման ամսաթիվը, բացառությամբ այն պարզապահարկի կամ գեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփռեղը։ Այդպիսի պարզապահարկները կամ գեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում։ Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում։ Գնված կամ սկզբնավորված վարկային առումով արժեզրկված (ՓՈՑ) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով վարկային ռիսկը, այսինքն, հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա։

Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող Ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով։ Բոլոր մնացած Ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով։ Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը։ Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները։ Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող վարկային գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկային գործիքներում ներդրումների գծով ճանաչվում է ակնկալվող վարկային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի։

Ֆինանսական ակտիվների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում («ստանդարտ պայմաններով») առջ ու վաճառքի գործարքներ) ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն այն ամսաթվով, երբ Ընկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ֆինանսական ակտիվը։ Մնացած բոլոր գնման գործարքները ճանաչվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը սկսում է այդ ֆինանսական գործիքի մասով հանդես գալ որպես պայմանագրի կողմ։

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստ. Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող վարկային կորուստները։ Ընկերությունը գնահատում է վարկային գործիքների հետ կապված ակնկալվող վարկային կորուստը և ճանաչում է կորուստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ։ Ակնկալվող վարկային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությանը կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի արժեքը ժամանակի մեջ, և (iii) անցյալ իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման։

Ամորտիզացված արժեքով չափվող վարկային գործիքները, պայմանագրային ակտիվները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող վարկային կորուստի պահուստի չափով։

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ հետևյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով։

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր։

Ակնկալվող վարկային կորուստները կորուստի պահուստի միջոցով պետք է չափվեն հետևյալ մեծություններով.

- 12-ամսյա ակնկալվող վարկային կորուստներ, այսինքն՝ ակտիվի ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ, որոնք կարող են առաջանալ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ֆինանսական գործիքի դեֆոլտի իրադարձությունների արդյունքում, (ներկայացվում է որպես Փուլ 1), կամ
- Ակնկալվող վարկային կորուստներ ակտիվի ողջ ժամկետի ընթացքում, որոնք կարող են առաջանալ ֆինանսական գործիքի ողջ տևողության ընթացքում բոլոր դեֆոլտի իրադարձությունների արդյունքում (ներկայացվում է որպես Փուլ 2 և Փուլ 3)։

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ
(շարունակություն)**

Ակնկալվող վարկային կորուստների չափման համար Ընկերությունը կիրառում է ՖՅՄՍ 9-ի պարզեցված մոտեցում, որն օգտագործում է ակտիվի տևողության ողջ ընթացքում ակնկալվող վարկային կորուստի պահուստ բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար (Ծանոթագրություն 11):

Ֆինանսական ակտիվներ. դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Վերականգնման հիմնավորված ակնկալիքների բացակայության հիմնական հայտանիշ է հանդիսանում վերջնաժամկետի լրանալը: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Ֆինանսական ակտիվներ. ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաները. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ. (i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններից: Այս դասակարգումը վերաբերում է ածանցյալ ֆինանսական գործիքներին, առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններին (օրինակ, արժեթղթերի կարծ դիրքեր), պայմանական հատուցմանը, որը բիզնեսի միավորման ժամանակ ճանաչվում է ձեռք բերող կողմից և սկզբնական ճանաչման պահին որպես այսպիսին սահմանված այլ ֆինանսական պարտավորություններին, և (ii) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի և փոխատվության հանձնառությունների:

Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ֆինանսական գործիքներ. հաշվանցում. Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտարդություն կամ մարելու զուտ արժեքը, կամ էլ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Դիտարկվող հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) ընկանոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցայահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, քանի որ (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հաշվեգրվում են, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարձակալության պարտավորություններ: Վարձակալությունից բխող պարտավորությունները սկզբնապես չափվում են ներկա արժեքի հիմունքով: Վարձակալության պարտավորությունները ներառում են հետևյալ վարձավճարների զուտ ներկա արժեքը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

- ֆիքսված վճարումներ (ներառյալ ըստ եռօրյան հաստատուն վճարները)՝ հանած վարձակալության խթանման գծով ստացվելիք միջոցները,
- վարձակալության փոփոխական վճար, որը հիմնված է ինդեքսի կամ դրույթաչափի վրա, որը սկզբնապես չափվել է՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույթաչափը,
- վարձակալության դադարեցման համար տույժերի վճարումներ, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է Ընկերության կողմից այդ օպցիոնի գործադրումը:

Երկարաձգման և դադարեցման օպցիոնները ներառված են Ընկերության մի շարք վարձակալական պայմանագրերում: Այս տերմիններն օգտագործվում են Ընկերության գործունեության ընթացքում օգտագործվող ակտիվների կառավարման առումով առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու նպատակով: Ողջամտորեն որոշակի երկարաձգման օպցիոնների ներքո կատարվելիք վարձակալության վճարները նույնպես ներառվում են պարտավորության գնահատման մեջ:

Փոխառության աճողական տոկոսադրույքը որոշելու համար Ընկերությունը.

- հնարավորության դեպքում, որպես ելակետ, օգտագործում է առանձին վերցրած վարձակալի՝ երրորդ կողմից ստացված ֆինանսավորումը, որը ճշգրտվում է՝ արտացոլելով երրորդ կողմի ֆինանսավորումն ստանալուց ի վեր ֆինանսավորման պայմաններում տեղի ունեցած փոփոխությունները,
- օգտագործում է կառուցողական մոտեցում, որի հիմքում ընկած է առանց ռիսկի տոկոսադրույքը՝ ճշգրտված վարկային ռիսկով, և
- կատարում է վարձակալությանը բնորոշ ճշգրտումներ, օրինակ. ժամկետի, արժույթի և գրավի գծով:

Վարձակալության վճարները բաշխվում են մայր գումարի և ֆինանսական ծախսերի միջև: Ֆինանսական ծախսերը ներկայացվում են որպես վարձակալության ժամանակահատվածի ընթացքում շահույթ կամ վնաս՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի համար պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն պարբերական տոկոսադրույքը ստանալու համար:

Փոխառություններ. Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով հաշվեգրված ծախսերը, և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ եռօրյան, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման, և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթի կամ վնասի համար հիմք են հանդիսանում գնահատումները, եթե ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են նախքան համապատասխան հարկային հաշվետվություններ ներկայացնելը: Հարկերը, բացառությամբ շահութահարկի, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս:

Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են՝ կիրառելով հարկային դրույթները, որոնք, ըստ եռօրյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվանցում հնարավոր է այն դեպքում, երբ օրենսդրությունը նախատեսում է ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվանցման իրավունք, և երբ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը վճարվում է միևնույն հարկային մարմնին միևնույն հարկատուի կողմից, կամ տարբեր հարկատուների կողմից, երբ առկա է փոխադարձ հաշվանցման միջոցով վերջնահաշվարկ կատարելու մտադրություն:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ընկերությունը վերահսկում է այն ժամանակավոր տարբերությունների հակադարձումը, որոնք վերաբերում են դուստր կազմակերպությունների շահաբաժինների գծով հարկերին կամ դրանց վաճառքից շահույթին: Ընկերությունը չի արտացոլում հետաձգված հարկային պարտավորությունները նման ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունն ակնկալում է ժամանակավոր տարբերությունների հակադարձում տեսանելի ապագայում:

Անորոշ հարկային դիրքեր. Ընկերության անորոշ հարկային դիրքերը գնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի դիրքերի գծով ներկայացվող պարտավորությունները հաշվառվում են այն դեպքերում, երբ ղեկավարությունը համարում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը՝ հարկային մարմինների կողմից Ընկերության հարկային դիրքի վիճարկման պարագայում, ավելի բարձր է, քան դրանց բացակայության հավանականությունը: Նման գնահատման համար հիմք են ընդունվում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ըստ Էուլայան գործող հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունները, ինչպես նաև համանման հարցերի շուրջ հայտնի դատական ակտերը կամ այլ որոշումները: Տուգանքների, տույժերի և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը: Շահութահարկի անորոշ դիրքերի ճշգրտումները արտացոլվում են շահութահարկի գծով ծախսերի կազմում:

Ավելացված արժեքի հարկ. Ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել գուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն: Ակնկալվող վարկային կորուստների արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտավորության համախառն գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների՝ արտադրության նպատակով բացթողման և այլ դուրսգրման դեպքում, դրանց չափումը կատարվում է միջին կշռված հիմքի վրա: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայություններն ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Պարտավորությունների և վճարների գծով պահուստ: Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամկետով կամ գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են:

Հասույթի ճանաչում.

Վաճառքը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցվել է, այսինքն՝ երբ ապրանքները փոխանցվել են հաճախորդին, վերջինս ունի ապրանքներն իր հայեցողությամբ տնօրինելու լիակատար հնարավորություն, և չկան չմարված պարտավորություններ, որոնք կազդեին հաճախորդի կողմից ապրանքների ընդունման վրա: Փոխանցումն իրականացվում է այն ժամանակ, երբ ապրանքները հաճախորդին հանձնվում են Ընկերության պահեստում, համաձայնության և կորստի ռիսկերը փոխանցվում են հաճախորդին, և հաճախորդը կամ ապրանքն ընդունել է պայմանագրին համապատասխան, սպառել է ընդունումը վիճարկելու համար նախատեսված ժամանակահատվածը, կամ Ընկերությունն ունի օբյեկտիվ ապացույց, որ ընդունման բոլոր չափանիշները բավարարվել են:

Չեղյով վաճառքից հասույթը ճանաչվում է՝ հիմք ընդունելով պայմանագրով սահմանված գինը:

Ֆինանսավորման ոչ մի տարր ներկա չի համարվում, քանի որ վաճառքն իրականացվում է 30 օր տարածամյետ վճարման պայմանով, ինչը համահունչ է շուկայում ընդունված գործելակերպերին: Դեբիտորական պարտքը ճանաչվում է ապրանքների առաքման ժամանակ, հաշվի առնելով, որ դա այն պահն է, երբ հատուցումը դառնում է անվերապահ, քանի որ մինչև վճարման կատարման օրը պահանջվում է միայն ժամանակի անցում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Հատուցումներ աշխատակիցներին: Օրավարձերը, աշխատավարձերը, ՀՀ պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովագրության հիմնադրամներին հատկացումները վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության արձակուրդները, պարգևավճարները և այլ ոչ դրամական նպաստները հաշվետվում են այն տարվա ընթացքում, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են Ընկերության աշխատողների կողմից:

Ավանդային պարտավորություններ: Ավանդային պարտավորությունը ճանաչվում է, երբ վերադարձվող տարաները առաջվում են հաճախորդին: Այնուհետև «վերադարձման ենթակա տարաներ գործարանում/պահեստում» ակտիվը վերադասակարգվում է որպես «վերադարձման ենթակա տարաներ՝ առևտրի մեջ»: Փոխանցումը տեղի է ունենում հաշվեկշռային արժեքով՝ բազմապատկած քանակով: Վերադարձման ենթակա տարաների հաշվեկշռային արժեքը հավասար է ավանդի արժեքին: Այս վերադասակարգումը տեղի է ունենում ամսական կտրվածքով: Կատարվում է գնահատում կտրված կամ կորած վերադարձվող տարաների քանակի և արժեքի վերաբերյալ, որոնց վերադարձը չի ակնկալվում: Այս գնահատումը ձևակերպվում է որպես կրճատում՝ ինչպես վերադարձման ենթակա կոնտեյներների, այնպես էլ ավանդային պարտավորության հաշվում, և հիմնված է վերադարձի տեսլական պատմական օրինաչափությունների և ղեկավարության նախկին փորձի վրա:

Դրամական հոսքերի հաշվետվությունում արտարժույթի տարբերությունների ներկայացում: Ընկերությունը որոշում է կայացրել արտարժույթի տարբերությունները բացառել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշիվների փոփոխությունների գումարներից և դրանց գումարները ներկայացնել որպես ճշգրտում՝ անկանխիկ հոդվածներից ստացված շահույթում նախքան հարկումը:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև մասնագիտական դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հարկային օրենսդրություն. ՀՀ հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների: Դեկավարության համոզմամբ՝ հարկային օրենսդրության հիման վրա կատարված իր մեկնաբանություններն ու գնահատականները պատշաճ և հիմնավորելի են, սակայն որևէ երաշխիք չի կարող տրվել առ այն, որ դրանք չեն վիճարկվի հարկային մարմինների կողմից: Տե՛ս Ծանոթագրություն 20:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համաձայն ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Դեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Ընկերության համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ղեկավարության կողմից գնահատված ժամկետներից տարբերվեին 10%-ով, ամորտիզացիոն մասհանումները կաճեին/կնվազեին 106,021 հազ. ՀՀ դրամով 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում (2019թ. կաճեին/կնվազեին 107,373 հազ. ՀՀ դրամով):

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումը Ընկերության համար պարտադիր է՝ սկսած 2020թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա.

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքների փոփոխություններ (թողարկված են 2018թ. մարտի 29-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Բիզնեսի սահմանում. ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ (թողարկված են 2018թ. հոկտեմբերի 22-ին և գնումների մասով ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Նյութականության որոշում. ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ (թողարկված են 2018 թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Բազային տոկոսադրույքի բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկված են 2019 թ. սեպտեմբերի 26-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2021թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները:

Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով:

«Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը, ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հուլիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ-ի պրակտիկայի 2-րդ հայտարարության մեջ փոփոխություններ. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հրապարակում (թողարկված են 2021 թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ը փոփոխության է ենթարկվել ընկերություններից պահանջելով հրապարակել իրենց Նյութական հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունները, էական հաշվապահական քաղաքականության փոխարեն: Փոփոխությունը սահմանում է Նյութական հաշվապահական քաղաքականության տեղեկատվությունը: Փոփոխության մեջ պարզաբանվել է նաև, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը Նյութական է, եթե առանց դրա ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները չեն կարողանա հասկանալ ֆինանսական հաշվետվությունների այլ Նյութական տեղեկատվությունները:

Փոփոխությունը ներռում է նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք կարող են Նյութական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների համար: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունը պարզաբանել է, որ անհրաժեշտ չէ հրապարակել հաշվապահական հաշվառման քաղաքականության ոչ Նյութական տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, եթե այն հրապարակվում է, այն չպետք է թաքցնի Նյութական հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը:

Այս փոփոխությանը աջակցելու համար, ՖՀՄՍ-ի պրակտիկայի 2-րդ հայտարարությունը «Նյութականության վերաբերյալ դատողություններ կայացնելը» փոփոխվել է՝ հաշվետվության քաղաքականության ներկայացման վրա Նյութականության հայեցակարգը կիրառելու վերաբերյալ ուղեցույց տրամադրելու համար: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ: «Հաշվապահական հաշվառման հաշվարկների սահմանում» (թողարկված 2021 թվականի փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը հստակեցնում է, թե ինչպես պետք է ընկերությունները տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունից: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկը՝ կապված մեկ գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ. ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ (թողարկված 2021 թվականի մայիսի 7-ին և ուժի մեջ է 2023 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները սահմանում են, թե ինչպես հաշվարկել հետաձգված հարկը գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և շահագործումից հանելու պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում, կազմակերպություններն ազատվում են հետաձգված հարկի ճանաչումից, երբ առաջին անգամ են ճանաչում ակտիվները կամ պարտավորությունները:

Նախկինում որոշակի անորոշություն կար, թե արդյո՞ք ազատումը կիրառվում է այնպիսի գործարքների վրա, ինչպիսիք են վարձակալությունը և շահագործումից հանելու պարտավորությունները, գործարքներ, որոնց համար ճանաչվում են և ակտիվներ, և պարտավորություններ: Փոփոխություններով պարզվում է, որ ազատումը չի կիրառվում, և որ ընկերություններից պահանջվում է ճանաչել հետաձգված հարկ նման գործարքների համար: Փոփոխությունները պահանջում են, որ ընկերությունները ճանաչեն հետաձգված հարկը գործարքների վրա, որոնք նախնական ճանաչման դեպքում առաջացնում են հավասար քանակությամբ հարկվող և պահվող ժամանակավոր տարբերություններ: Ընկերությունն այժմ գնահատում է փոփոխությունների ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

**«Կոլա-Կոլա Հելենիկ Բոթլինգ Քասնիս Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Հող	Շենքեր, սեբենա- սարքավորումներ	Փոխարդա- միջոցներ	Մարկետինգային սարքավորումներ	Այլ	Անավարտ շինարա- րություն	Օգտագործման հրավումքի ձևով	Օգտագործման
								ակտիվներ
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	61,993	3,209,663	290,161	1,301,949	232,882	380,860	-	5,477,508
Ավելացումներ	7,931	148,582	9,331	722,819	115,754	-	369,890	1,374,308
Օտարումներ	-	-	-	(1,491)	(148,902)	-	-	(150,393)
Փոխանցումներ	-	380,860	-	-	-	(380,860)	-	-
Սաշվածության գծով ծախս	-	(465,314)	(96,023)	(344,064)	(50,929)	-	(117,401)	(1,073,731)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2019թ.	69,924	3,273,791	203,469	1,679,213	148,805	-	252,489	5,627,691
Ավելացումներ	-	236,827	130,053	609,876	39,925	-	106,336	1,123,017
Օտարումներ	-	(8,680)	-	(96,658)	-	-	-	(105,338)
Սաշվածության գծով ծախս	-	(431,938)	(72,270)	(387,433)	(54,723)	-	(113,850)	(1,060,214)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	69,924	3,070,000	261,252	1,804,998	134,007	-	244,975	5,585,156

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

8 Ոչ նյութական ակտիվներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ներքին մշակված ծրագրակազմ	Ձեռք բերված ծրագրակազմի լիցենզիաներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	350,973	3,452	354,425
Ավելացումներ Անորոշագիտ ծախս	6,136 (85,382)	- -	6,136 (85,382)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2019թ.	271,727	3,452	275,179
Ավելացումներ Անորոշագիտ ծախս	9,618 (87,112)	- -	9,618 (87,112)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	194,233	3,452	197,685

9 Հիմնական միջոցների գծով կանխավճարներ

Կանխավճարներ շարժը ներկայացված է ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Հիմնական միջոցների գծով կանխավճարներ
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	133,307
Ավելացումներ Կանխավճարները, որոնք փոխանցվել են հիմնական միջոցներին, ապրանքների կամ ծառայությունների ստացման համար	313,462 (139,025)
Ընդամենը կանխավճարներ հիմնական միջոցների գծով առ 31 դեկտեմբերի 2019թ.	307,744
Ավելացումներ Կանխավճարները, որոնք փոխանցվել են հիմնական միջոցներին, ապրանքների կամ ծառայությունների ստացման համար	21,256 (305,105)
Ընդամենը կանխավճարներ հիմնական միջոցների գծով առ 31 դեկտեմբերի 2020թ.	23,895

«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բորժինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.

10 Տրամադրված վարկեր

Թողարկած վարկերը Ընկերության ավելցուկային կանխիկ գումարն է, որը տրամադրվում է Coca-Cola HBC Finance B.V.- ին, որը հանդես է գալիս որպես Coca-Cola HBC AG- ին պատկանող ընկերությունների ֆինանսավորող սուբյեկտ:

2020 թվականի դեկտեմբերի 31-ին 644,405 հազար ՀՀ դրամի վարկեր (2019 թվական. 649,217 հազար ՀՀ դրամ) տրամադրվում են եվրոյով, 4,768,436 հազար ՀՀ դրամ (2019 թվական ` 5,029,590 հազար ՀՀ դրամ)՝ ԱՄՆ դոլարով:

Վարկի դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ կատարվում է պայմանագրերի մարման ժամկետի հիման վրա:

Եվրոյով տեղաբաշխման պայմանագրերի համար տոկոսադրույքը սահմանվում է որպես 3 միլիոն EURIBOR + 2.498%, իսկ դոլարով տեղաբաշխման դեպքում՝ 3 մլն դոլար Libor + 3.519%, երկու տոկոսադրույքները պետք է զրոյացվեն եռամսյակային կտրվածքով և սահմանվեն նոր տոկոսադրույքներ:

Ընկերությունը ՖՀՄՍ 9-ը կիրառում է ակնկալվող վարկային կորուստները չափելու համար, որը տրամադրված վարկերի համար օգտագործում է 12-ամսյա սպասվող վարկային վնաս: Ընկերության ղեկավարության կողմից կատարված վերլուծության հիման վրա ակնկալվող վարկային կորուստը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ եական չէ:

11 Պաշարներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Հումք	582,414	503,420
Գնված ապրանքներ	421,752	292,100
Արտադրված ապրանքներ	158,337	293,055
Պահեստամասեր	73,958	75,247
Վերադարձելի տարաներ պահեստում	159,833	171,090
Վերադարձելի տարաներ առևտրում	222,962	211,958
Այլ ծախսվող նյութեր	139,484	149,124
Ընդամենը պաշարներ	1,758,740	1,695,994

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	217,594	153,594
Նվազեցված՝ վարկային կորստի գծով պահուստի չափով	(66,703)	(65,942)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	150,891	87,652
Տրված կանխավճարներ	230,785	277,652
Հարկային կանխավճարներ	7,885	1,292
Այլ	2,410	5,773
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	391,971	372,369

Ակնկալվող վարկային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող վարկային կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Ակնկալվող կորստի դրույքաչափերի համար հիմք են ծառայում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին նախորդող 36-ամսյա ժամանակահատվածում հաճախորդների վճարման օրինաչափությունները և այլ ժամանակահատվածում համապատասխան վարկային կորուստների պատմական տվյալները: Կորուստների պատմական տվյալները ճշգրտվում են՝ արտացոլելու համար ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությունը

**«Կոլա-Կոլա Ֆեյենիկ Բորինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա: Ընկերությունը առավել կարևոր գործոններ է համարել ՀՆԱ-ն և այն երկրների գործազրկության մակարդակը, որտեղ նա վաճառում է իր ապրանքներն ու ծառայությունները, և, համապատասխանաբար, ճշգրտում է պատմական կորուստների տեսակերը՝ հիմնվելով այդ գործոնների սպասվող փոփոխությունների վրա:

Առևտրային դեբիտորական պարտքերի կորուստների պահուստը որոշվում է ըստ ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի մատրիցի: Պահուստի մատրիցը հիմնված է ակտիվի մարման ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա ազդեցություն ունեցող մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությամբ:

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (հազ. ՀՀ դրամ)	31 դեկտեմբերի 2020թ.				31 դեկտեմբերի 2019թ.			
	Կորստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստ ողջ ժամկետի համար		Կորստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստ ողջ ժամկետի համար	
			Զուտ հաշվեկշռային արժեք	Զուտ հաշվեկշռային արժեք			Զուտ հաշվեկշռային արժեք	Զուտ հաշվեկշռային արժեք
Առևտրային դեբիտորական պարտքեր								
- ընթացիկ	0.20%	121,068	243	120,825	1%	50,820	508	50,312
- պակաս քան 14 օր ժամկետանց	2.35%	4,384	103	4,281	3%	4,593	138	4,455
- 15 - 30 օր ժամկետանց	9.99%	1,334	133	1,201	11%	1,973	217	1,756
- 31 - 60 օր ժամկետանց	12.94%	4,332	560	3,772	13%	3,685	479	3,206
- 61 - 90 օր ժամկետանց	20.15%	3,698	745	2,953	19%	1,647	313	1,334
- 91 - 120 օր ժամկետանց	24.58%	2,696	663	2,033	22%	1,909	420	1,489
- ավելի քան 120 օր ժամկետանց	26.81%	21,623	5,797	15,826	22%	32,179	7,079	25,100
Անհատապես գնահատված	100%	58,459	58,459	-	100%	56,788	56,788	-
Ընդամենը	-	217,594	66,703	150,891	-	153,594	65,942	87,652

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված վարկային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող վարկային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար:

2020 թվականի ընթացքում առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	2020	2019
Արժեզրկման կորստի պահուստ առ 1 հունվարի 2020թ.	65,942	91,029
Կորստի պահուստի ավելացում/նվազում տարվա ընթացքում	761	(25,867)
Արժեզրկման կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի 2020թ.	66,703	65,942

Ընկերությունը գնահատել է Այլ դեբիտորական պարտքերի ռիսկը և կարծում է, որ ռիսկի և տրամադրման չափն նյութական չէ:

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Ընթացիկ ակտիվների կանխավճարների տեղաշարժերը հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Կանխավճարներ ծառայությունների դիմաց
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի, 2019թ.	326,201
Ավելացումներ Կանխավճարների ապաճանաչում՝ պայմանավորված ապրանքների կամ ծառայությունների ստացման հանգամանքով	8,311,893 (8,360,442)
Ընդամենը կանխավճարներ առ 31 դեկտեմբերի, 2019թ.	277,652
Ավելացումներ Կանխավճարների ապաճանաչում՝ պայմանավորված ապրանքների կամ ծառայությունների ստացման հանգամանքով	6,401,133 (6,448,000)
Ընդամենը կանխավճարներ առ 31 դեկտեմբերի, 2020թ.	230,785

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ցայահանջ մնացորդներ բանկում Կանխիկ՝ դրամարկղում	1,669,101 3,780	816,212 1,208
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,672,881	817,420

Բանկային մնացորդները տեղաբաշխված են Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված (2019թ.՝ Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված):

14 Կանոնադրական կապիտալ

2020թ. դեկտեմբերի 31-ին Ընկերության բաժնեմասի ընդհանուր թիվը կազմել է 25 բաժնեմաս (2019 թ. դեկտեմբերի 31-ին՝ 25 բաժնեմաս)՝ մեկ բաժնեմասի համար 53,874 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով (2019թ.՝ մեկ բաժնեմասի համար՝ 53,874 հազ. ՀՀ դրամ): Բոլոր թողարկված սովորական բաժնեմասերը ամբողջությամբ վճարված են: Ցուրաքանչյուր սովորական բաժնեմաս տալիս է մեկ ձայնի իրավունք: Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բաժնետիրական կապիտալի ընդհանուր գումարը Ընկերության կանոնադրությունից տարբերվում է 336,975 հազար ՀՀ դրամով (2019 թ.՝ 336,975 հազար ՀՀ դրամ)՝ պայմանավորված այն փաստով, որ Պետական ռեզիստրում Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխության գրանցումը դեռ ընթացքի մեջ է սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ:

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բորչինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

15 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	Փոխադրամիջոցներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	252,489	252,489
Ավելացումներ Օտարումներ Մաշվածության գծով ծախս	106,336 - (113,850)	106,336 - (113,850)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	244,975	244,975

Ընկերությունը վարձակալության գծով պարտավորությունները ճանաչել է հետևյալ կերպ.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի, 2020թ.	1 հունվարի, 2020թ.
Կարճաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ	86,529	100,503
Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ	172,410	162,500
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	258,939	263,003

2020 թ. ֆինանսական ծախսերում ներառված տոկոսների ծախսը կազմել է 21,364 հազ. ՀՀ դրամ (2019 թ.՝ 27,637 հազ. ՀՀ դրամ):

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր Հաշվեզրված պարտավորություններ	2,662,023 290,234	4,188,639 275,863
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	2,952,257	4,464,502
Վշխատակիցներին հատուցումների գծով հաշվեզրված ծախս Անհատական եկամտահարկի կրեդիտորական պարտքեր Այլ վճարման ենթակա հարկեր	139,732 - 2,132	411,822 7,710 3,836
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,094,121	4,887,870

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

17 Ավանդային պարտավորություններ

<i>Չազ. ՉՅ դրամ</i>	2020թ.	2019թ.
Առևտրում վերադարձման ենթակա շտերի գծով պարտավորություններ	150,109	85,168
Առևտրում վերադարձման ենթակա արկղերի գծով պարտավորություններ	72,853	126,790
Ընդամենը ավանդային պարտավորություններ	222,962	211,958

18 Հասույթների վերլուծություն ըստ կատեգորիաների

Արտաքին հաճախորդներից ստացված հասույթը, ըստ նմանատիպ ապրանքների կամ ծառայությունների խմբի, հետևյալն են.

<i>Չազ. ՉՅ դրամ</i>	2020թ.	2019թ.
Արտադրական ապրանքների վաճառք	14,125,969	15,142,453
Գնված ապրանքների վաճառք	6,290,036	7,047,538
Ընդամենը հասույթ	20,416,005	22,189,991

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքներն առաքվում են հաճախորդներին:

**«Կոլա-Կոլա Յեյլենիկ Բորժինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

19 Գործառնական եկամուտներ և ծախսեր

Գործառնական ծախսեր			
<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Օգտագործված նյութեր և բաղադրիչներ		5,395,683	6,051,367
Գնված ապրանքների վաճառքի արժեքը		4,419,840	4,788,302
Աշխատակազմի ծախսեր	7	2,349,438	3,234,103
Հիմնական միջոցների մաշվածություն		1,060,214	1,073,731
Գովազդի ծախսեր		916,653	1,502,656
Տեղեկատվական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ		449,596	451,875
Ներքին խորհրդատվական վճարներ		400,871	348,301
Կոմունալ և կապի ծախսեր		319,865	367,396
Պատրաստի ապրանքների և նյութերի կորուստ		159,706	211,557
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ		132,231	131,577
Սպառված վառելիք		112,077	156,891
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս		107,858	-
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	8	87,112	85,382
Գործուղումներ և ներկայացուցչություն		58,914	124,888
Սպառված պահեստամասեր		51,282	57,279
Ապահովագրական ծախսեր		37,844	-
Եկամտահարկից բացի այլ հարկեր		27,383	14,023
Վերապատրաստման ծախս		19,398	100,941
Այլ ծախսեր		941,241	751,837
Պատրաստի ապրանքների և անավարտ արտադրանքի պաշարների փոփոխություններ		(134,718)	(33,082)
Ընդամենը գործառնական ծախսեր		16,912,488	19,419,024

Գործառնական եկամուտներ		
<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Պարտքի ներում	519,629	655,951
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	148,504	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերականգնում	-	16,433
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ	-	30,863
Այլ եկամուտներ	88,256	90,097
Ընդամենը գործառնական եկամուտներ	756,389	793,344

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

20 Շահութահարկ

(ա) Շահութահարկի գծով ծախսի կազմը

Շահութահարկի գծով ծախսի կազմը հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ընթացիկ հարկ	840,663	955,174
Հետաձգված հարկ	174,132	(216,392)
Տարվա շահութահարկի գծով ծախս	1,014,795	738,782

(բ) շահութահարկի գծով ծախսի համադրում շահույթի կամ վնասի հետ՝ բազմապատկած կիրառելի հարկադրույքով

Ընկերության 2020թ. եկամտի նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույքը 18% է (2019թ.՝ 20%): Հարկերի գծով ծախսի անկապվող և իրական մեծությունների միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	4,395,608	3,708,142
Տեսականորեն հաշվարկված հարկի ծախս՝ օրենսդրությամբ սահմանված 18% դրույքաչափով	(791,210)	(741,629)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը		
- Չհարկվող եկամուտ	103,487	55,096
- Չնվազեցվող ծախսեր	(277,872)	(73,555)
- Նախորդ տարիների ընթացիկ հարկի գծով պահուստի ձևավորում	(49,200)	18,885
- Հարկային դրույքաչափի փոփոխության ազդեցությունը		2,421
Տարվա շահութահարկի գծով ծախս	(1,014,795)	(474,740)

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը մանրամասն ներկայացված է ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	1 հունվարի, 2020.	(Ծախսագրվել է)/ վերականգնվել է շահույթում կամ վնասում	31 դեկտեմբերի, 2020թ.
Ժամանակավոր տարբերությունների հետևանքը			
Հիմնական միջոցներ	(305,731)	29,329	(276,402)
Ոչ նյութական ակտիվներ	(1,690)	(1,152)	(2,842)
Ոչ ընթացիկ կանխավճարներ	-	8,465	8,465
Տրամադրված վարկեր	(13,130)	8,519	(4,611)
Պաշարներ	88,599	10,681	99,280
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,634	(9,162)	2,472
Վարձակալության գծով պարտավորություններ	18,091	(18,091)	-
Ավանդային պարտավորություններ	38,152	1,981	40,133
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	142,290	(204,701)	(62,411)
Չուտ հետաձգված հարկային ակտիվ	(21,785)	(174,131)	(195,916)

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բորժինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

20 Ծախսեր (շարունակությունը)

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ժամանակավոր տարբերություններում տեղի ունեցած շարժերի հարկային հետևանքը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի, 2019թ.	(Ծախսագրվել է/ վերականգնվել է շահույթում կամ վնասում	31 դեկտեմբերի, 2019թ.
Հիմնական միջոցներ	(346,076)	40,345	(305,731)
Ոչ կյուբական ակտիվներ	1,421	(3,111)	(1,690)
Ոչ ընթացիկ կանխավճարներ	2,763	(2,763)	-
Տրամադրված վարկեր	(1,334)	(11,796)	(13,130)
Պաշարներ	53,836	34,763	88,599
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(64,929)	76,563	11,634
Վարձակալության գծով պարտավորություններ	-	18,091	18,091
Ավանդային պարտավորություններ	26,314	11,838	38,152
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	89,828	52,462	142,290
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	(238,177)	216,392	(21,785)

21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ սովորական գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների և արտաքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա դեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

Հարկային օրենսդրություն. ՀՀ-ում հարկման համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են վերանայման և հետաքննության հարկային մարմինների կողմից, որոնք տուգանքներ և տույժեր կիրառելու իրավասություն ունեն: Հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում հարկային տարին բաց է հարկային մարմինների կողմից վերանայման համար:

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել հարկային ռիսկեր, որոնք ավելի էական են, քան այլ երկրներում: Դեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել է՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեն իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

Կապիտալ ծախսերի պարտավորություններ: 2020թ. դեկտեմբերի 31-ին Ընկերությունն իր հիմնական միջոցների գծով ունեցել է կապիտալ ծախսերի գծով պայմանագրային պարտավորություն, ընդհանուր 300,113 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 355,965 հազ. ՀՀ դրամ):

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), վարկային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառնակ առաջնային նպատակն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառնակները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Վարկային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է վարկային ռիսկի, այսինքն՝ ռիսկը, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով: Վարկային ռիսկն առաջանում է Ընկերության կողմից տարածամկետ վճարման պայմաններով վաճառք իրականացնելու և մյուս կողմերի հետ ֆինանսական ակտիվներ առաջացնող այլ գործարքներ իրականացնելու արդյունքում:

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերության կողմից ըստ ակտիվների դասի վարկային ռիսկի առավելագույն ազդեցությունը արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Տրամադրված վարկեր (Ծանոթագրություն 10)		
Տրամադրված վարկեր	5,412,841	5,678,807
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)		
Դեբիտորական պարտքեր, զուտ	150,891	87,652
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)		
Ցպահանջ մնացորդներ բանկում	1,669,101	816,212
Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն ազդեցությունը	7,232,833	6,582,671

Վարկային ռիսկը մեղմվում է գրավի և այլ վարկային բարելավումների միջոցով, ինչպես ներկայացված է 12-րդ ծանոթագրությունում:

Սահմանափակումներ. Ընկերությունը կառավարում է իր վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափել կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Վարկային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Լյի ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել վարկային ռիսկի վերաբերյալ այլ տեղեկություններ (Ծանոթագրություն 12):

Վարկային ռիսկերի կենտրոնացում: Ընկերությունը չի ենթարկվում վարկային ռիսկի կոնցենտրացիաների: 2020 թվականի դեկտեմբերի 31-ին Ընկերությունն ուներ զրո գործընկերներ (2019 թ. Դեկտեմբերի 31-ին՝ զրո գործընկերներ)՝ 20,000 հազ. ՀՀ դրամից բարձր դեբիտորական պարտքերի համախմբված մնացորդներով: Լյս մնացորդների ընդհանուր գումարը զրոյական էր (2019 թ. Դեկտեմբերի 31-ին՝ զրո) կամ առևտրի և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի համախառն գումարի 0% -ը (2019 թ. Դեկտեմբերի 31-ը՝ 0%):

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են երկու բանկերում (31 դեկտեմբերի, 2019 թ. երկու բանկ), այդպիսով Ընկերությանը վարկային ռիսկի համակենտրոնացման ենթարկելով:

Անկախվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափում: ԱՎԿ-ն իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությանը կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված վարկային կորուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՎԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՎԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա վարկային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և գեղչման տոկոսադրույք:

Ընկերության մոտեցումը ԱՎԿ չափումը ներառելու վերաբերյալ նկարագրված է 10, 12 և 13 ծանոթագրություններում:

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթակա է շուկայական ռիսկերի ազդեցության: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտաթույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Բաց դիրքերը ձևավորվում են հիմնականում հիմնական միջոցների, հումքի և փոխառությունների կրեդիտորական պարտքերի հետ կապված:

Ղեկավարությունը սահմանում է ռիսկի ընդունելի մակարդակը, որը վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերը գերազանցող վնասների առաջացումը՝ ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր տեղի ունենալու դեպքում: Ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործակցի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործակիցներ: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործակիցների փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտաթույթի դրույքաչափի փոփոխությունները:

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժույթային ռիսկ. Արժույթային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական հիմունքով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է արտարժույթի փոխարժեքի ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հազ. ՀՀ դրամ	Առ 31 դեկտեմբերի 2020թ.			Առ 31 դեկտեմբերի 2019թ.		
	Դրամական ֆինանսա- կան ակտիվներ	Դրամական ֆինանսա- կան պարտավո- րություններ	Չուտ հաշվեկշռա- յին դիրք	Դրամական ֆինանսա- կան ակտիվներ	Դրամական ֆինանսա- կան պարտավո- րություններ	Չուտ հաշվեկշռա- յին դիրք
ԱՄՆ դոլար	4,775,867	(912,847)	3,863,020	5,042,524	(724,592)	4,317,932
Եվրո	652,464	(575,610)	76,854	685,898	(291,396)	394,502
ՌԴ ռուբլի	97	(17,356)	(17,259)	6,288	(94,527)	(88,239)
Բրիտանական ֆունտ	15	-	15	13	-	13
Ընդամենը	5,428,443	(1,505,813)	3,922,630	5,734,723	(1,110,514)	4,624,209

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես որևէ կյուբական արժույթային ռիսկ առաջացնող:

Դետալայ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	Առ 31 դեկտեմբերի 2020թ.	Առ 31 դեկտեմբերի 2019թ.
<i>Շահույթի կամ վնասի վրա ազդեցությունը.</i>		
ԱՄՆ դոլարի արժևորում 5%-ով (2019թ.՝ արժևորում 5%-ով)	193,151	215,897
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով (2019թ.՝ անկում 5%-ով)	(193,151)	(215,897)
Եվրոյի արժևորում 5%-ով (2019թ.՝ արժևորում 5%-ով)	(3,843)	19,725
Եվրոյի անկում 5%-ով (2019թ.՝ անկում 5%-ով)	3,843	(19,725)
ՌԴ ռուբլու արժևորում 5%-ով (2019թ.՝ արժևորում 20%-ով)	(863)	4,412
ՌԴ ռուբլու անկում 5%-ով (2019թ.՝ անկում 20%-ով)	863	(4,412)
Բրիտանական ֆունտ ստեռլինգի արժևորում 5%-ով (2019թ.՝ արժևորում 5%-ով)	1	3
Բրիտանական ֆունտ ստեռլինգի անկում 5%-ով (2019թ.՝ անկում 5%-ով)	(1)	(3)

Տոկոսադրույքի ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքի վրա ազդող ռիսկին, որն առաջանում է շուկայական տոկոսադրույքների տատանումների հետևանքով:

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակում ամփոփված է տոկոսադրույքների ռիսկերի ազդեցությունը Ընկերության վրա: Աղյուսակը ներկայացնում է Ընկերության ֆինանսական ակտիվների համախառն գումարները հաշվեկշռային արժեքով՝ դասակարգված ըստ պայմանագրային տոկոսների վերագնահատման կամ մարման ժամկետների՝ կախված, թե Նշվածներից որն է տեղի ունենում ավելի վաղ:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	Ավելի, քան 1 տարի	Ընդամենը
31 դեկտեմբերի, 2020թ. Տրամադրված վարկեր	49,182	531,301	1,473,780	3,358,578	5,412,841
Չուտ տոկոսային զգայունության բացը առ 31 դեկտեմբերի, 2020թ.	49,182	531,301	1,473,780	3,358,578	5,412,841
31 դեկտեմբերի, 2019թ. Տրամադրված վարկեր	61,204	376,082	268,630	4,972,891	5,678,807
Չուտ տոկոսային զգայունության բացը առ 31 դեկտեմբերի, 2019թ.	61,204	376,082	268,630	4,972,891	5,678,807

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ ղեկավարությունն այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար:

Ընկերությունը վերահսկում է տոկոսադրույքները իր ֆինանսական գործիքների գծով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են արդյունավետ տոկոսադրույքները հաշվետու ժամանակաշրջանի համապատասխան վերջում հիմնվելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ուսումնասիրված հաշվետվությունների վրա:

<i>Տարեկան % արտահայտությամբ</i>	2020թ.	2019թ.
Տրամադրված վարկեր	2.5 - 4	1 - 3

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Իրացվելիության ռիսկը կառավարվում է ղեկավարության կողմից ամենօրյա հիմունքով: Մայր ընկերության գանձապետարանի վարչությունը վերահսկում է Ընկերության դրամական հոսքերի ամսական շարժի կանխատեսումները:

2020-ի և 2019-ի դեկտեմբերի 31-ին Ընկերությունը չունի բանկերի կամ այլ ֆինանսական հաստատությունների հանդեպ վճարման պարտավորություններ: Ընկերության իրացվելիության պորտֆելը բաղկացած է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, տե՛ս ծանոթագրություն 13-ը:

Ըստ ղեկավարության գնահատման՝ իրացվելիության փաթեթի դրամական միջոցները կարող են մեկ օրվա ընթացքում վերածվել կանխիկի՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջը բավարարելու համար: Այն դեպքերում, երբ վճարվող գումարը ֆիքսված չէ, աղյուսակում նշված արժեքը որոշվում է՝ ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմաններից: Արտարժույթով վճարները փոխարկվում են՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սփոթ փոխարժեքը:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև աղյուսակում: Մարման ժամկետի աղյուսակում բացահայտված գումարներն իրենցից ներկայացնում են պայմանագրային չգեղչված դրամական միջոցների հոսքեր, ներառյալ համախառն վարկային պարտավորությունները և ապագա տոկոսների վճարումները: Նման չգեղչված դրամական հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում նշված գումարը հիմնված է գեղչված դրամական հոսքերի վրա:

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	12 ամսից մինչև 5 տարի	Ընդամենը
Պարտավորություններ Առևտրային կրեդիտորական և հաշվեգրված պարտքեր (Ծանոթագրություն 16)	2,886,238	86,019	-		2,952,257
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 15)	9,567	47,835	52,812	169,247	279,461
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	2,895,805	133,854	52,812	169,247	3,251,718

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	12 ամսից մինչև 5 տարի	Ընդամենը
Պարտավորություններ Առևտրային կրեդիտորական և հաշվեգրված պարտքեր (Ծանոթագրություն 16)	3,802,469	717,817	156,234		4,676,520
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 15)	11,139	55,697	61,492	197,065	325,393
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	3,813,608	773,514	217,726	197,065	5,001,913

23 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման առումով Ընկերության խնդիրն է՝ ապահովել Ընկերության անընդհատության հիմունքով գործելու կարողությունը, միևնույն ժամանակ բաժնետերերի համար ապահովել եկամտաբերության ընդունելի մակարդակ, հաշվի առնելով այլ գործընկերների շահերը և պահպանելով կապիտալի գծով ծախսերը նվազագույնի հասցնելու համար օպտիմալ կապիտալի կառուցվածք: Կապիտալ կառուցվածքը պահպանելու և կարգավորելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու նպատակով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տնօրինվող կապիտալի չափը կազմել է 11,006,717 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 9,064,914 հազ. ՀՀ դրամ):

**«Կոկա-Կոլա Հելթենիկ Բորժինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

24 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքը այն գումարն է, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել պատրաստակամ կողմերի միջև ընթացիկ գործարքում, բացառությամբ հարկադիր վաճառքի կամ լուծարման, և դա լավագույնս վկայում է ակտիվ գնանշված շուկայական գինը:

Ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները որոշվել են Ընկերության կողմից` օգտագործելով առկա շուկայական տեղեկատվությունը, և համապատասխան գնահատման մեթոդաբանությունները: Այնուամենայնիվ, շուկայի տվյալները մեկնաբանելու և գնահատված իրական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է դատողություն: ՀՀ-ն շարունակում է ցուցադրել զարգացող շուկայի որոշ բնութագրեր, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալը: Շուկայական գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել ճգնաժամային գործարքներ, ուստի կարող են չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքներ: Դեկավարությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս օգտագործել է շուկայական առկա բոլոր տեղեկությունները:

Ֆինանսական գործիքների ամորտիզացված արժեքով հաշվեկշռային արժեքի և իրական արժեքների միջև տարբերությունն նյութական չէ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է ապագայում ակնկալվող դրամական միջոցների հոսքերի զեղչման մոդելի վրա, կիրառելով ընթացիկ տոկոսադրույքները նմանատիպ վարկային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր գործիքների նկատմամբ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Սահմանված մարման ժամկետով ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների իրական արժեքը գնահատվել է` հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք զեղչվել են համանման վարկային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով:

25 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները` հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Չափման նպատակով, 2017թ. դեկտեմբերի 31-ի ՀՀՄՍ 39, *Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում*, ստանդարտով ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների` ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, բ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, գ) մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ, և դ) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i) սկզբնական ճանաչման ժամանակ որպես այդպիսին սահմանված ակտիվներ, և (ii) վաճառքի համար պահվող ակտիվներ: Բացի այդ, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են առանձին կատեգորիա:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների դասակարգումն այս չափման կատեգորիաներով 31 դեկտեմբերի, 2020թ. դրությամբ:

	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
<i>Դազ. ՀՀ դրամ</i>		
ԱԿՏԻՎՆԵՐ		
Տրամադրված վարկեր (Ծանոթագրություն 10)	5,412,841	5,678,807
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)		
- Առևտրային դեբիտորական պարտքեր, գուտ	150,891	87,652
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)		
- Ցայահանջ վճարման ենթակա բանկային մնացորդներ	1,669,101	816,212
- Կանխիկ` դրամարկղում	3,780	1,208
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	7,236,613	6,583,879

Ընկերության բոլոր ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

26 Փոխկապակցված կողմերի գծով մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական կառուցվածքի վրա:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի գծով մնացորդները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Այլ փոխկապակցված կողմեր
Տրամադրված վարկեր	5,412,841	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	382,723	1,340,013

31 դեկտեմբերի 2019թ. ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի գծով մնացորդները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Այլ փոխկապակցված կողմեր
Այլ դեբիտորական պարտքերի համախառն գումար	2,348	-
Տրամադրված վարկեր	5,678,807	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,728,205	712,874

31 դեկտեմբերի 2020թ. ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Այլ փոխկապակցված կողմեր
Պարտքի ներում	-	239,724
Հումքի և սպառման նյութերի գնումներ	-	(3,157,499)
Ապրանքների գնումներ վերավաճառքի համար	(3,232,894)	-
Հիմնական միջոցների գնումներ	-	(502,784)
Ներքին խորհրդատվական վճար	(400,871)	-
SS ծախսեր	(227,719)	-
Տոկոսային եկամուտ	149,399	-
Այլ ծախսեր	(235,288)	-

31 դեկտեմբերի 2019թ. ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Այլ փոխկապակցված կողմեր
Պարտքի ներում	-	1,042,965
Հումքի և սպառման նյութերի գնումներ	-	(3,319,900)
Ապրանքների գնումներ վերավաճառքի համար	(3,141,513)	-
Հիմնական միջոցների գնումներ	-	(572,644)
Ներքին խորհրդատվական վճար	(425,535)	-
SS ծախսեր	(215,199)	-
Տոկոսային եկամուտ	141,356	-
Այլ ծախսեր	(555,761)	-

**«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

26 Փոխկապակցված կողմերի գծով մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները ներկայացված են ստորև.

	2020թ.		2019թ.	
	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն
<i>Հազ. ՀՀ դրամ</i>				
<i>Կարճաժամկետ հատուցումներ</i>				
- Աշխատավարձ և կարճաժամկետ պարգևավճարներ	233,456	75,108	371,314	117,773
<i>Երկարաժամկետ հատուցումներ</i>				
- Երկարաժամկետ պարգևավճարներ	19,476	19,476	78,119	78,119
Ընդամենը	252,932	94,584	449,433	195,892

27 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման: